# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ARLIVACH | Կանացի համազգեստ կիսաշրջազգեստով | Կանացի համազգեստ կիսաշրջազգեստով | ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ | Համազգեստ /Իգական սեռի / Բաճկոնը՝ (երկարաթև) մուգ կապույտ Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), աստառով (8-С5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Ձախ կրծքին արծաթագույն թելով ասեղնագործ լոգոտիպ - 55 հատ Կիսաշրջազգեստ՝ մուգ կապույտ Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով, - 55 հատ Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ կտորից (իգական սեռի) (175գ/մք խտությամբ, 33% վիսկոզա, 67% Պ/Է) ±3%, ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, կոճակով կոճկվող թեզանիքներով: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերնաշապիկի թևքերը երկար են, կոճակով կոճկվող թեզանիքներով – 55 հատ Պիլոտկա տեսակի գլխարկներ` Գլխարկ պիլոտկա (կանացի),պատրաստվում է մուգ կապույտ գույնի կիսաբրդյա գործվածքից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը մուգ կապույտ գույնի են և ձախ կողմում ունեն 3 օդանցք: Աստառը պատրաստվում է (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), իսկ ներսի ժապավենը բնական կաշվից` 30 մմ լայնությամբ: Առջևի կենտրոնական մասում ասեղնագործվում է լոգոտիպ, որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ: 55 հատ Կանացի փողկապ` Կանացի փողկապ` մուգ կապույտ գույնի, երկթև բանտ, որի թևերն ունեն 10 սմ երկարություն, 4,5 սմ լայնություն, 45 աստիճանի բացվածք: Նախքան փողկապների պատրաստումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փողկապների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Ապրանքների փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը: 55 հատ Ժիլետ կանացի մուգ կապույտ` պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից(67% բուրդ, 33%, պոլիէսթեր, 317 գ/մ2 խտությամբ), աստառով: Կոճկվում են 4 օղակ-կոճակով:Վիզը V-աձև է` եզրագծերով: Մեջք` կենտրոնական կարով և դեպի թևքեր բարձրացված կարերով:Հետևի երեսպատման կենտրոնում ծալքով: - 55 հատ Մետրոպոլիտենի տարբերանշան (լոգո) – 110 հատ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |